ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1/փ - 321

*ներքական համարը*

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

*ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր բնակավայրի գլխավոր հատակագծում առանձին հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ*

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր բնակավայրի գլխավոր հատակագծում հետևյալ փոփոխությանը.

| Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը | Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը |
|---|---|
| 07-042-0381-0110 կադաստրային ծածկագրով 0.051 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողեր | 07-042-0381-0110 կադաստրային ծածկագրով 0.051 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողեր |

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Անհրաժեշտ է կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել հաշվի առնելով ՀՀ Կոտայքի մարզպետարանի կողմից նշված պահանջը՝ կառուցվող շենքերի և շինությունների սպասարկման համար անհրաժեշտ ենթակառուցվածքներն իրականացվեն բացառապես կառուցապատողի միջոցների հաշվին:

4. Ջրվեժ համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Ձորաղբյուր բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել՝ ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր բնակավայրի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | | |
| | | Ա. Ղուկասյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | | |
| | | Հ. Դավթյան |

Երևան, « 26» «սեպտեմբերի» 2023 թ.